




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

М. пр. 467. 1838

1838

1838

84 17

17-66

ՊՐԵՄԻԵՐ ՄԵՐԻՄԵ

ԹԱՄԱՆԳՈՒ



ՊԵՏՏՐՍ

845

1-66

-6 NOV 2011

ՊՐՈՍՊԵՐ ՄԵՐԻՄԵ

845

5-66

սյ.

Թ Ա Մ Ա Ն Գ Ո

Նկարներ 1. ԶՈՒՍՄԱՆԻ

ՊԵՏՏՐԱՏ
ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՍԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938

28 JUN 2013

1873

Քարգմ. ՆԻԿ. ՏԵՐ ՄԱՆՎԵԼՅԱՆ
 Պատ. խմբագրի՝ Մ. ԿՈՐԵՈՒՆ
 Տեխ. խմբագրի՝ ԱՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ
 Սրբագրիչ՝ ԳԱՐ. ՀԱԿՈԲՅԱՆ
 Կոնտրոլ սրբագրիչ՝ Ս. ՇԱՀԲԱԶՅԱՆ



4704
 38

Գլավիտի լիազոր 3616 Հրատ. № 4394.

Պատվեր 130. Տիրաժ 3000.

Թուղթ 62×94 Տպագր. 2 1/2 մամուլ.

Մեկ մամ. 24×480 նիշ. Հեղինակային 11 1/2 մամ.

Հանձնված է արտադրության 4 փետրվարի 1938 թ.

Ստորագրված է տպագրության համար 19 ապրիլի 1938 թ.

Պատկերաչափ Լուսարան՝ Յերեան, Լենինի № 65

Պ Ր Ո Ս Պ Ե Ր Մ Ե Ր Ի Մ Ե (1803—1870)

1827 թվին Ֆրանսիայում լույս տեսավ արեվմտյան սլավոնների ժողովրդական պոեզիայի մի ժողովածու։ Այդ ժողովածուն, վորի վերնագիրն էր «Գուզլա», ընկել էր Պուշկինի ձեռքը։ Նա թարգմանեց «Գուզլաի» մի քանի եջերը ռուսերեն լեզվով։ Այդպես հանդես լեկան Պուշկինի «Արեվմտյան սլավոնների լերգերը»։

Պուշկինը «Գուզլան» ընդունել էր վորպես ժողովրդական ստեղծագործության իսկական նմուշներ։ Այնինչ ռուս բանաստեղծը գործ ուներ կեղծիքի հետ։ Այդ կեղծիքի խորամանկ և վառպետ հեղինակն էր Ֆրանսիացի լերիտասարդ գրող Պրոսպեր Մերիմեն։ Նա կարող էր պարծենալ Պուշկինի սխալով. հարկավոր էր վոչ միայն շատ լավ ծանոթ լինել առարկային, այլև ունենալ հնարելու փայլուն ձիրք, վոր կարելի լիներ մոլորեցնել նրան, վորին ինքը՝ Մերիմեն, անվանում էր աշխարհիս մեծագույն բանաստեղծը։

Այդ Մերիմեյի գվարճության մոլութունն էր— ընթերցողին գցել մոլորության մեջ։ Իր մի գործողությամբ պիեսների ժողովածուն նա վերագրել է գոյութուն չունեցող իսպանական դերասանուհի Կլառա Գազուլին և նույնիսկ գրքին կցել էր նրա պատկերը, այ-

նինչ դա հենց ինքը Մերիմելի պատկերն էր, վորն այդ նպատակով կնոջ զգեստ էր հագել:

Թվում էր, թե Մերիմեն իսկապես մեծ արժեք չէր տալիս իր հեղինակությանը: Պատմվածքներ, վեպիկներ և պիեսներ գրելը նրա բազմաթիվ զբաղմունքներից մեկն էր, վորին նա նվիրել էր իր չափած-ձևած և հաջող անցկացրած կյանքը: Լինելով նկարիչ Լեոնոր Մերիմելի և նկարչուհի Աննա Մորալի վորդին՝ նա իր գրչին հավասար տիրապետում էր նաև ջրանկարչի վրձնին. լինելով իրավաբանական ֆակուլտետի ուսանող՝ նա ուսումնասիրում էր ճարտարապետությունը և ժողովում էր հին դրամներ. լինելով մինիստրության համեստ պաշտոնյա՝ նա խորանում էր հին հունական լեզվի և հնագիտության մեջ:

Լաֆն գիտություններն ու բազմազան ձիրքերը նրան դարձրին լերկու ակադեմիկոսների անդամ և «պատմական հուշարձանների գլխավոր տեսուչ»: Այդ պաշտոնը նա վարել է իր կյանքի մի լերրորդ ժամանակաշրջանում: Հնություն հուշարձանների պահպանության հոգսն ստիպել է նրան կատարել բազմաթիվ ճանապարհորդություններ, վորտեղից նա վերադարձել է Փարիզ, բերելով իր հետ հին շինությունների մանրամասնիկների նկարները, տեղական հազվագյուտ դարձվածքների գրանցումներ և հիշողություններ ուղևորական խաչաքարեր հանդիպումների—ջորեպանների և գյուղացիների հետ, գերասանունիկների և թափառաշրջիկ գիտնականների հետ, սպանների և նավաստիների հետ... Այսպես՝ հնություններով պարապելուց, անձանոթ վալրերով և մարդկանցով հետաքրքրվելուց առաջացան Մերիմելի սեղմ ու գրավիչ պատմվածքները:


Իր աշխատությունների մեջ ամենուրեք ցրված են նրա ապշեցուցիչ կրթվածության մասնիկները, վորոնք

ազատորեն մտցնում են ընթերցողին պատմության խորքերը, կամ հեղինակը վստահ ընտրում է գործողության վայր հեռավոր լերկրները—Իսպանիան և Կոնստանդնուպոլիսը, Ռուսաստանը և Լիտվան: Պատմաբան, լեզվագետ և ճանապարհորդ Մերիմեն աչքի չէր ընկնում վոչ միայն անցյալ ժամանակների և ոտաբերկրների նկարագրության ճշտությամբ, այլև մարդկանցիկների նկարագրության ճշտությամբ:

Նրան վերջիվերջո հետաքրքրում էին միմիայն մարդիկ, և այն եր՝ արտակարգ կերտվածք, ուժեղ ապրումներ և վողբերգական ճակատագիր ունեցող մարդիկ: Նրանց մասին նա գրում էր զուսպ ու պարզ լեզվով և այդ զսպվածության և պարզության մեջն է կայանում Մերիմելի «Կարմեն» և «Կոլումբա», «Կառլոս IX-ի ժամանակների քրոնիկոնի» և «Թամանգոյի» հեղինակի խելացի պոեզիան:

Նա իր գրվածքներին էր նվիրում իր սակավաթիվ ազատ ժամերը և, չնայած դրան, նա մտել է համաշխարհային գրականությունը, վորպես հարձակվող, դրախտիկ և ճշմարտալից պատմվածքի ամենանշանավոր վարպետներից մեկը, պատմվածք, վորը, ինչպես ասել է Փրանսիական մի քննադատ, կարդացվում է կես ժամում, բայց չի մոռացվում ամբողջ կյանքում:

Ա. ՌՈՍԿԻՆ



ፆ ህ. ሆ ህ. ኔ ዓ. በ

Նալապետ Լեդուն լավ ծովագնաց եր: Նա իր ծա-
ռայութիւնն սկսել եր վորպես հասարակ նալաստի, հե-
տո դարձել եր ղեկվարի ոգնական: Տրաֆալգարի ճակա-
տամարտում ծառի ճշուղը ջարդել եր նրա ձախ ձեռքը,
այդ ձեռքն անդամահատել ելին, ապա արձակել ծառայու-
թիւնից՝ տալով նրան լավ վկայագրեր: Հանդիստ կյանքը
նրա սրտովը չեր, և լերբ դեպքը բերեց նորից նալ բարձ-
րանալու, նա սկսեց ծառայել ծովահենների նալի վրա¹)
վորպես լերկորդ լեյտենանտ: Այն փողերը, վոր նա ստա-
ցել եր մի քանի ավարների համար, նրան հնարավո-
րութիւն ելին տվել գրքեր գնելու և ուսումնասիրելու
ծովագնացութեան տեսութիւնը, վորի գործնական կողմը

1) Ծովանեցեցեի (կապեր)նավ — մասնավոր մարդկանց նավ էր, զոր հաճախեցինք մարեկաված էր ծովային պատերազմի համար և մասնակցում էր այդ պատերազմին՝ Թշնամու առևտրական նավերին տրելու համար: Դրանց գործադրումը Թյուհը պատերազմի մասնակարգի իրենց անցյալ զարի վերջերում միայն:

նա հրաշալի դիտեր: Ժամանակի ընթացքում նա նավապետ դարձավ ծովահենական մի լյուգերի¹⁾, վորն ուներ յերեք թնդանոթ և վաթսուն հոգի անձնակազմ: Ջերսիի առագաստագործները մինչև այժմ ել հիշում են նրա սխրագործությունները: Խաղաղությունը նրան հուսահատեցրեց, պատերազմի ժամանակ նա կուտակել էր մի փոքրիկ կարողություն, վորը հույս ուներ դեռևս մեծացնելու անգլիացիների հաշվին: Հանգամանքները նրան ստիպեցին իր ծառայությունն առաջարկելու խաղաղ նեգոցիանտներին²⁾, և վորովհետև նա վճռական ու փորձված մարդու համբավ ուներ, ուստի նրան սիրով նավ վստահեցին: Յերեք նեգրերի առուծախն արգելվեց և յերեքը անույն պարապելու համար հարկավոր լեղավ խաբել վոչ միայն ֆրանսիական մաքսատներում ծառայողների աշալլությունը, վոր այնքան ել դժվար չէր, այլ, վոր ավելի վտանգավորն էր,—հարկավոր էր խուսափել անգլիական հաժանավերից, նավապետ Լեդուն թանգարժեք մարդ դարձավ սև փայտ վաճառող առևտրականների համար³⁾:

Խիստ տարբերվելով ծովագնացների մեծամասնությունից, վորոնք իր նման յերկար ժամանակ տառապել էին ստորագաս պաշտոններում, նա բոլորովին մեծ սարսափ չէր զգում նորմուծությունների դիմաց և չէր կառչում հին սովորություններին, վոր հաճախ ունենում են այդ ծովագնացները նաև բարձր պաշտոններում յեղած ժամանակ: Նավապետ Լեդուն, ընդհակառակն, առաջինն էր, վոր իր նավատիրոջը խորհուրդ տվեց գործ ածել յերկաթյա արկղներ՝ նրանց մեջ ջրի պաշար պահելու համար: Շղթաներն ու վոտնակալանդները, վոր մեծ քանակությամբ պահում էլին ստրուկներ տեղափոխող

1) Լյուգեր—փոքրիկ առագաստանավ:

2) Նեգոցիանտ—խոշոր վաճառական:

3) Սեվ փայտ վաճառողներ—իրենց այդպես էլին անվանում այն մարդիկ, վորոնք նեգրերի առուծախով էլին զբաղվում:



Նավապետ Լեդուն

նավերը, նա պատրաստել էր տվել նոր սխտեմով և խնամքով լաքել էր ժանգոտվելուց պահպանելու համար։ Բայց ստրկավաճառների մեջ նա ամենից շատ հռչակ ձեռք բերեց, շինելով յերկկալմանի հիանալի առաջատեսներով մի նավ,—նեղ, յերկար, ինչպես ռազմական նավը և միաժամանակ ընդունակ տեղավորելու մեծ քանակությամբ ստրուկներ։ Նա այդ նավը անվանեց «Եսպերանս»¹⁾։ Նա պնդեց, վոր տախտակամածների միջի տարածությունը յերեք վոտնաչափ և չորս մատնաչափից ավելի չլինի, հավատացնելով, վոր այդ չափը հնարավորություն կտա չափավոր հասակ ունեցող ստրուկներին նրստել մեծ հարմարությամբ,—իսկ ի՞նչ հարկ կա, վոր նրանք կանգնեն։

— Յերբ նրանց կբերեն գաղութները,—ասում եր
Լեզուն,—նրանք ստիպված կլինեն չափազանց շատ մնա-
լու վտտի վրա:

Նեղրեբը նստում ելին մեջքները նավերին հենած,
յերկու գուգահեռ շարքերով, վորոնց մեջ մնում եր մի
տարածություն, վոր ուրիշ ստրկատար նավերում ծա-
ռայում եր միայն վորպես անցք: Լեզուն հնար գտավ այդ
անցքում տեղավորելու ելի մի քանի նեղր, տեղավորելով
նրանց նստածներին ուղղաձիգ դիրքով: Այսպիսով նրա
նավը մի դյուծին ավելի նեղրեր եր տանում, քան նույն
ջրածավալն ունեցող վորև ե ուրիշ նավ: Անհրաժեշտ դեպ-
քում կարելի յեր տեղավորել նույնիսկ ավելին, սակայն
չէ՞ վոր հարկավոր ե մարդասեր լինել և ամեն մի նեղրի
տալ առնվաղն հինգ վոտնաչափ յերկարություն և յերկու
վոտնաչափ լայնություն ունեցող տեղ, վորպեսզի նա մի
կերպ կարողանա դիմանալ վեցշաբաթյա նավարկու-
թյանը:

1) Եսպերանսո—հույս:

— Վորովհետեւ, վերջիվերջո, — ասում եր Լեգուն տերոջը, արդարացնելով իր ալդ լիբերալ միջոցը, — նեղերն ել, ելապես, այնպիսի մարդիկ են, ինչպես մենք՝ սպիտակամորթներս:

«Նսպերանսը» Նանտից դուրս չեկավ ուրբաթ օրը, ինչպես հետո հիշում էյին նախապաշարված մարդիկ։ Սոսազաստանավն ուշիուշով դիտող տեսուչները չնկատեցին վեց մեծ արկղները, վորոնք լիքն էյին շղթաներով, վոտնակալանդներով և կապանքներով։ Նրանց ամենևին չգարմացրեց նաև ջրի այն ահագին պաշարը, վոր տանում էր իր հետ «Նսպերանսը», վորը, վկայաթղթերի համաձայն, գնում էր Սենեգալից վոչ հեռու՝ փայտ և փղոսկր բերելու։ Ճանապարհը մեծ չէր, ճիշտ է, բաց վերջիվերջո ավելորդ նախազգուշությունը յերբեք չի խանգարում։ Յեթե նրանք հողմազուրկ յեղանակի հանդիպեն, ի՞նչ պետք է անեն առանց ջրի։

Սյապես ուրեմն «Նսպերանսը» դուրս լեկավ ուրբաթ
որը, լավ առագաստավորված և բոլոր անհրաժեշտ պարեննե-
րով: Լեզուն, թերևս, կգերադասեր «ունենալ քիչ ավելի
ամուր կայմեր» ասենք՝ այդ նավից նա պատճառ չի ունե-
ցել գանգատվելու, ինչքան ժամանակ վոր յեղել է նրա
նավապետը: Մինչև Աֆրիկայի ափերը նավն անցավ հա-
ջողությամբ և արագ: Նավը խաբիսխ գցեց ժող գետի
(կարծեմ այդպես եր կոչվում նա) բերանում այն բո-
ւաբան, իբր անգլիական հաժանավերը չեյին հսկում ափը:
Տեղացի մակլերներն¹) անմիջապես յեկան նավը: Մոմենտն
ավելի քան հարմար եր: Հռչակավոր ռազմիկ և մարդա-
վաճառ Թամանգոն հենց նոր եր ափը բերել ստրուկների
մի ամբողջ խումբ և ծախում եր եժան գնով, վորպես մի մարդ,
վորն ույժ և հնարավորություն ունի արագորեն վերա-
կանգնելու պաշարը, հենց վոր առևտրի նյութն սպառվի:

1) Մակկեր — միջնորդ առևտրական գործարքների մեջ:

Նավապետ Լեզուն ափը դուրս չեկավ և այցելեց Թամանգոլին: Նա գտավ նրան ծղոտից շտապ շինած հյուղակում՝ իր յերկու կնոջ, մի քանի ոգնականների և ստրուկ ուղեցույցների ընկերակցութեամբ: Թամանգոն զուգվել էր, վորպեսզի ընդունի սպիտակամորթ նավապետին: Նա հագել էր հին յերկնագույն համազգեստ, վորի վրա դեռևս մնացել էին յենթասպի տրեզները. յուրաքանչյուր ուսից կախված էին յերկ-յերկու վոսկե ուսազիւններ, վորոնք ամրացված էին մի կոճակով և ճոճվում էին մեկն առջևից և մյուսը հետևից: Վորովհետև շապիկ չկար նրա հագին, իսկ համազգեստը քիչ կարճ էր նրա հասակն ունեցող մարդու համար, ուստի համազգեստի սպիտակ ծալքերի և գլինեցական կտավից կարած վարտիքի միջից յերևում էր սև մաշկի մի կարգին շերտ, վորը նմանում էր լաշն գոտու: Յերկար հեծելակային թուրը կախված էր նրա կողքից թոկով, իսկ ձեռքին բռնել էր մի հիանալի անգլիական յերկփողանի հրացան:

Այս ձևով զուգված աֆրիկական առաջնորդը յենթագրում էր, վոր շքեղութեամբ նա գերազանցում է Փարիզի կամ Լոնդոնի ամենանրբաճաշակ պճնամուլին:

Նավապետ Լեզուն լուռ դիտում էր նրան միառժամանակ: Թամանգոն ուղղվելով գրենադերի¹⁾ նման, վորին զորատեսի յեն հանել ոտարագգի գեներալի առաջ, հրճվում էր այն տպավորութեամբ, վորը նա, իր կարծիքով, թողել էր սպիտակամորթի վրա:

Ուշադրութեամբ գննելով նրան ապրանք ճանաչողի նման՝ Լեզուն շուռ յեկավ գեպի ոգնականը և ասաց.

— Ահա կտրիճ տղամարդ, վորին յես կծախելի առնվազն հազար եքլուով²⁾, յեթե վողջ ու առողջ Մարտինիկա հասցնելի նրան:

1) Գրենադերցե—սկզբում նուականը նետող զինվորներն էին կոչվում, ավելի ուշ՝ հետևակ զորքի առանձին ընտիր գնդերի զինվորները:

2) Նեյու—հին ֆրանսիական դրամ է՝ 3 ֆրանկ արժողութեամբ: Ձրանկը պատերազմից առաջ հավասար էր 37,5 կոպեկի՝ վոսկով:

Նրանք նստեցին, և նավաստիներից մեկը, վոր իտալական լեզուն¹⁾ մի քիչ գիտեր, իր վրա վերցրեց Թարգմանչի պարտականութիւնները:

Հաճելի ու սիրալիր խոսքեր և վողջույններ փոխանակելուց հետո յունգան²⁾ ներս բերեց ողու շշերով լի նակելուց հետո յունգան²⁾ ներս բերեց ողու շշերով լի զամբյուղը: Սկսեցին խմել և նավապետը, Թամանգոյի տրամադրութիւնը բարձրացնելու համար, նվիրեց նրան մի գեղեցիկ պղնձյա վառողաման, վորի վրա քանդակված էր Նապոլեոնի գլուխը: Ընծան ընդունվեց արժանավայել շնորհակալութեամբ, հետո բոլորը դուրս յեկան հյուղակից և նստեցին ստվերի տակ, ողու շշերի առաջ, իսկ Թամանգոն նշան տալով հրամայեց, վոր բերեն վաճառելու համար նախատեսված ստրուկներին:

Նրանք անցնում էին յերկար շարքով՝ հոգնածութիւնից ու սարսափից կուցած, նրանցից յուրաքանչյուրի վիզը սեղմված էր ավելի քան վեց վոտնաչափ յերկարութիւն ունեցող ճեղապարսափով, վորի յերկու ծայրերը միացած էին ծոծրակի մոտ փայտյա ձողով: Յերբ հարմրացած էին ծոծրակի մոտ փայտյա ձողով: Յերբ հարմրակար, իսկ սա նույն ձևով քարշ էր տալիս յերրորդին, սատիկը, իսկ սա նույն ձևով քարշ էր տալիս յերրորդին, և այլն: Յեթե հարկավոր էր լինում կանգ առնել, շարքի առջևից գնացողը գետնի մեջ էր խրում իր ճեղապարսատիկի սուր ծայրը և ամբողջ շարքը կանգ էր առնում: Դժվար չէր հասկանալ, վոր փախչելու մասին մտածել իսկ չէր կարելի, յեթե վզիդ կապած է վեց վոտնաչափ յերկարութեամբ հաստ փայտը:

1) Իտալական լեզուն—Արևմտյան Աֆրիկայի նեգրական իտալ կամ, շուրջ ցեղի լեզուն է:
2) Յունգա—նավերում սպասավորող պատանիները:

Նավապետն իր առջևով անցնող յուրաքանչյուր տղամարդ կամ կին ստորուկը տեսնելիս ուսերը վեր եր քաշում, գտնելով, վոր տղամարդիկ թուլակազմ են, կանայք՝ չափազանց ծեր կամ շատ ջահել, և գտնաբերվում եր սեղեղի ալյասերման վրա:

— Ամեն ինչ այլասերվում ե, — ասում եր նա, — մի ժամանակ բոլորովին ուրիշ եր: Կանանց հասակը հասնում եր հինգ վտանաչափ և վեց մատնաչափի և չորս տղամարդ կարողանում ելին պատեցնել ֆրեզատի կաբեստանը¹⁾, վորպեսզի բարձրացնեն գլխավոր խարխուլը:

Միևնույն ժամանակ, շարունակելով իր քննադատությունը՝ նա կատարեց իր առաջին ընտրությունն ամենաուժեղ և գեղեցիկ նեղրերի միջից: Դրանց համար նա կարող եր վճարել սովորական գինը, բայց մնացածների համար նա պահանջում եր մեծ գեղջ: Թամանգոն, ընդհակառակն, պաշտպանում եր իր շահերը, գովում եր ապրանքը, խոսում եր մարդկանց սակավության և առևտրի վտանգավորության մասին: Վերջը չգիտեմ ինչ գին նշանակեց նա այն ստրուկների համար, վորոնց սպիտակամորթ նավապետն ուզում եր տանել իր նավը: Հենց վոր թարգմանը Թամանգոնի առաջարկությունը թարգմանեց ֆրանսերեն լեզվով, Լեդուն քիչ մնաց զարմանքից և բարկությունից վայր ընկնի յերեսի վրա, հետո, ինչ-վոր զարհուրելի անեծքներ փնթփնթալով, նա վեր կացավ տեղից, վորպես թե ցանկանալով ընդհատել ամեն մի առևտուր այդ տեսակ խելառ մարդու հետ: Այն ժամանակ Թամանգոն սկսեց պահել նրան. նա դժվարությամբ կարողացավ հաջողեցնել, վոր նավապետը նորից նստի: Բացեցին մի

¹⁾ Կաբեստան — բեռը տեղափոխելու մեխանիզմն է, ֆրեզատ — յուսակազմ առադաստանով:

նոր շիշ, և խոսակցությունը վերսկսվեց: Այժմ սեամորթի հերթն եր՝ խելառ և զարմանալի համարելու սպիտակամորթի առաջարկությունները: Նրանք գոռում ելին, լերկար վիճում, խմում ողին մեծ քանակությամբ, բայց ողին չափազանց տարբեր ազդեցություն եր գործում լերկուր կողմերի վրա: Վորքան շատ եր խմում ֆրանսիացին, այնչափ քան ավելի յեր պակսեցնում առաջարկած գինը և վորքան շատ եր խմում աֆրիկացին, այնքան ավելի զիջող եր դառնում սակարկության մեջ: Այսպիսով վերջին շիշ եր դառնում սակարկության մեջ: Անպետք բամբակե գործհետ համաձայնությունը կայացավ: Անպետք բամբակե գործվածքներ, վառուդ, կալծաքարեր, լերեք փոքրիկ տակառ ողի, հիսուն հատ վատ տեսակի հրացան տրվեցին հարյուր հիսուն ստրուկների փոխարեն: Համաձայնությունը վավերացնելու համար նավապետը ձեռք-ձեռքի զարկեց սեամորթի հետ, վորն արդեն կիսահարբած դրություն մեջ եր, և իսկույն ստրուկները հանձնվեցին ֆրանսիացի նավաստիներին, վորոնք շտապ հանեցին նրանց վրայից ճեղապարտիկները և դրանց փոխարեն հագցրին նրանց յերկաթե վզնոցներ և վտանակալանդներ, վոր բավական պարզ վկայում եր լեվրոպական քաղաքակրթության գերազանցությունը:

Մնացել ելին դարձյալ յերեսուն ստրուկներ, դրանք յերեխաներն ելին, ծերունիները, թույլ կանայք: Իսկ նավը լիքն եր:

Թամանգոն, վոր չգիտեր, թե ինչ անի մնացածների հետ, առաջարկեց նավապետին գնել նրանց հատը մի շիշ ողիով: Առաջարկությունը գայթակղիչ եր: Լեդուն հիշեց, թե ինչպես «Սիցիլիական ժամոցի»¹⁾ ներկայացման ժամանակ Նանտում նա տեսել է բազմաթիվ հաստափոր ու ճարպակալած մարդիկ, վորոնք մտել են լեցուն պարտերը,

¹⁾ «Սիցիլիական ժամոց» — ֆրանսիական բանաստեղծ Դելավինի (1793—1843) պիեսն է:

սակայն հնարավորութիւնն են գտել տեղավորելու այն-
տեղ շնորհիւ մարդկային մարմնի սեղմելի լինելուն: Նա
յերեսուն ստրուկներէց վերցրեց քսան ամենից նիհար
ստրուկներ:

Այն ժամանակ թամանգոն խնդրեց մի-մի բաժակ
ողի մնացած տասի համար: Լեդուն մտածեց, վոր յերե-
խաները փոստային կառքերի մեջ վճարում և բռնում են
միայն կես տեղ: Նա յերեք յերեխա ևս վերցրեց և հայ-
տարարեց, վոր այլևս վոչ մի սեամորթ նրան հարկավոր չէ:
Թամանգոն տեսնելով, վոր իր ձեռքին մնում են յոթ
ստրուկներ, վերցրեց հրացանը և նշան դրեց մի կնոջ,
վորն ամենից մոտ եր կանգնած իրեն. դա յերեք յերե-
խաների մայրն էր:

— Գնիր,—ասաց նա սպիտակամորթին,— թե չե լես
նրան կռպանեմ, մի բաժակ ողի, կամ յես կկրակեմ:

— Ի՞նչ պետք է անեմ լես նրան, գրողը տանի,—
պատասխանեց Լեդուն:

Թամանգոն հրացանն արձակեց, և ստրկուհին մեռած
ընկավ գետին:

— Հետո, հետեւյալը,—գոչեց Թամանգոն, նշան դնե-
լով մի բոլորովին զառամած ծերունու:—Մի բաժակ ողի,
կամ...

Նրա կանանցից մեկը հրեց նրա ձեռքին, և գնդակը
վրիպեց: Թամանգոնի կինը ճանաչեց ծերունուն, վորին
իր ամուսինն ուզում էր սպանել. դա այն վիռլէնն էր,
վորը նախագուշակել էր, թե նա պետք է թագուհի լինի:

Թամանգոն, վորին ողին կատաղեցրել էր, կորցրեց
իր անձնիշխանութիւնը, տեսնելով, վոր մեկը ընդդիմա-
նում է իր ցանկութեանը: Նա կռպտեց կերպով խփեց կնոջը
հրացանի կոթով, հետո դառնալով դեպի Լեդուն, ասաց.

— Վերցրու, յես նվիրում եմ քեզ այս կնոջը:

Կինը գեղեցիկ էր: Լեդուն ժպտալով դիտեց նրան,
հետո բռնեց նրա ձեռքը:

— Սրան տեղավորելու հնար կգտնեմ,—ասաց նա:

Թարգմանը փափկասիրտ մարդ էր: Նա տվեց կար-
տոնն մի ծխատուփ և դրա փոխարեն խնդրեց մնացած
վեց ստրուկներին տալ իրեն: Նա ազատեց նրանց ձե-
ղապարսառիկից և թույլ տվեց գնալու՝ ուր կամենան:
Նրանք իսկուհն փախան զանազան կողմեր, շտապելով
ավելի շուտ վերադառնալ հայրենիք, վորը ծովափից յերկու
հարյուր մղոն հեռավորութեան վրա յեր գտնվում:

Այդ ժամանակ նավապետը հրաժեշտ տվեց Թաման-
գոյին և հրամայեց, վորքան կարելի յե շուտ բռնել ապ-
րանքը: Անդգուշուկուն կլինեք գետի վրա յերկար մնալը.
հաճանավերը կարող էին գալ, իսկ նա ցանկանում էր
քարձրացնել առագաստները հետեւյալ որն իսկ: Ինչ վե-
քաբերում է Թամանգոյին, նա պառկեց սովերում, խոտի
վրա և քնեց, վորպեսզի իր հարբածութիւնն անցնի:

Յերբ նա զարթնեց, նափն արդեն առագաստները
բացած գնում էր գետով դեպի ցած: Թամանգոն, վորի
գլուխը շմած էր դեռ յերեկվա հարբեցողութիւնից, կան-
չեց իր կնոջը՝ Այշեյին: Նրան պատասխանեցին, վոր Այ-
շեն դժբախտութիւնն է ունեցել հարուցելու նրա դժգո-
շին զժբախտութիւնն և նա կնոջը նվիրել է սպիտակամորթ
նավա-
հութիւնը, և նա կնոջը նվիրել է մոտ՝ նավը: Թամանգոն
պետին, վորը տարել է նրան իր մոտ՝ նավը: Թամանգոն
ապշած ալդ լուրից, զարկեց իր գլխին, հետո վերցրեց
հրացանը և, վորովհետեւ գետը մինչև ծովը թափվելը կա-
հրացանը և, վորովհետեւ գետը մինչև ծովը թափվելը կա-
տարում էր մի քանի պտույտներ, նա վազեց ամենակարճ
ճանապարհով դեպի փոքրիկ ծովախորշը, վորն ընկած էր
գետաբերանից կես մղոն հեռավորութեան վրա: Այնտեղ
նա հույս ուներ նավակ գտնելու, վորով կարող կլինեք
թիավարել դեպի առագաստանավը, վորը դանդաղեցնում
էր իր ընթացքը գետի վորտապտույտների պատճառով:

4704
38

Նա չսխալվեց. հիրավի նա դեռ ժամանակ ունեցավ ցատկերու նավակը և հասնելու նավին:

Լեդուն զարմացավ նրան տեսնելով, բայց ավելի ևս զարմացավ, լսելով վոր, նա հետ ե պահանջում իր կնոջը:

— Հոժարակամ տվածը չեն վերադարձնում,— պատասխանեց նա և շուռ յեկավ:

Սեամորթը պահանջում եր, առաջարկում եր վերադարձնել ստրուկների համար ստացած առարկաների մի մասը: Նավապետը ծիծաղեց, նա հայտնեց, վոր Այշեն շատ լավ կին ե և նա ուզում ե պահել նրան իր համար: Այն ժամանակ խեղճ Թամանգոն սկսեց արտասուքի հեղեղ թափել և արձակել ցավագին գոռոցներ, սուր, ինչպես վիրաբուժական անդամահատության յենթարկվող գոթախոտների ճիչերը: Մերթ թափալում եր նա տախտակամածի վրա և կանչում եր իր թանգագին Այշենին, մերթ գարկում եր գլուխը նավեզրին, կարծես ցանկանալով սպանել իրեն: Մնալով սառնասիրտ՝ նավապետը ցույց եր տալիս նրան ավեր, նշան անելով, վոր ժամանակն ե հեռանալու: Բայց Թամանգոն համառում եր. նա առաջարկում եր ամեն ինչ, մինչև իսկ իր վոսկե ուսադիրները, հրացանը և թուրը: Բոլորն ել ապարդյուն եր:

Այդ վեճի ժամանակ «Եսպերանսի» լեյտենանտը նավապետին ասաց.

— Այս գիշեր մեզանում յերեք ստրուկ ե մեռել և տեղ ե բացվել: Ինչո՞ւ չվերցնենք այդ առողջ տղամարդուն, վորը մենակ արժե յերեք մեռածի:

Լեդուն միտք արավ, վոր կարող ե ծախել Թամանգոնին հազար եքյուով, վոր այդ ճանապարհորդությունը, վորը նրան վերջինն եր թվում, շատ շահավետ լեղավ, վոր ճիշտն ասած, հարստությունը դիզված ե արդեն և, քանի վոր այլևս ստրուկների առեւտուր անելու կարիք չկա,— կարևոր չե, լավ թե վատ համբավ կթողնի նա Գվինեայի

ծովափին իր մասին, մանավանդ, վոր ծովափն ամայի յեր և Աֆրիկայի ռազմիկն ամբողջովին գտնվում եր նրա իշխանության ներքո: Հարկավոր եր միայն խլել նրա հրացանը, վորովհետև վտանգավոր եր հարձակվել աֆրիկացու վրա, քանի զենքը նրա ձեռքին եր: Լեդուն խնդրեց ցույց տալ իրեն հրացանը վորպես թե նրա համար, վոր համոզվի, թե նա արժե այնքան, վորքան գեղեցիկ Այշեն: Փորձելով փակադակը, նա աշխատեց դուրս թափել վառողը հրացանից: Իր կողմից լեյտենանտն ել վերցրեց առաջնորդի վրայից թուրը և հենց վոր այսպիսով Թամանգոն մնաց անզեն, յերկու առողջ նավաստիներ հարձակվեցին նրա վրա, վայր գցեցին մեջքի վրա և սկսեցին կապկռվել: Սեամորթի դիմադրությունը հերոսական եր: Ուշքի գալով առաջին հարվածից, նա, չնայած իր աննպաստ դրությանը, յերկար կռվում եր յերկու նավաստիների հետ: Շնորհիվ զարմանալի ուժին, նրան հաջողվեց վեր թռչել: Բռունցքի հարվածով նա գետին գլորեց այն մարդուն, վորը բռնել եր նրա ոճիքից, նա թողեց իր զգեստի մի կտորը մի ուրիշի ձեռքին և կատաղած հարձակվեց լեյտենանտի վրա, վորպեսզի թուրը խլի նրա ձեռքից: Լեյտենանտը խփեց նրա գլխին և հասցրեց նրան լայն, բայց վոչ խոր վերք: Թամանգոն յերկրորդ անգամ վայր ընկավ: Իսկույն նրա ձեռքերն ու վոտքերն ամուր կապեցին: Քանի նա պաշտպանվում եր, արձակում եր կատաղության գոռոցներ և կռվում եր թակարդի մեջ ընկած վարադի նման, բայց, տեսնելով, վոր ամեն մի դիմադրություն անոգուտ ե, նա փակեց աչքերը և այլևս վոչ մի շարժում չգործեց: Միայն նրա ծանր և արագ շնչառությունն եր ցույց տալիս, վոր դեռ կենդանի յե:

— Գրողը տանի,— բացականչեց նավապետ Լեդուն:

— Մեզ վաճառված նեգրերն ամբողջ սրտով ծիծաղելու յեն, տեսնելով նրան նույնպես ստրուկ: Այս անգամ նրանք կտեսնեն, վոր կա նախախնամություն:

Այնինչ խեղճ Թամանգոն արյունաքամ եր լինում Սրտացավ Թարգմանը, վոր նախընթաց որն ազատել եր վեց ստրուկների կյանքը, մոտեցավ, կապեց նրա վերքը և դարձավ նրան մխիթարական խոսքերով: Յես չգիտեմ արդեն, թե ինչ ասաց նա նրան: Նեգրը մնաց անշարժ, վորպես զիակ: Հարկավոր յեկան յերկու նավաստիներ, վոր, վորպես հակ, տանեն նրան ներքին տախտակամածը, նրա համար նշանակված տեղը: Յերկու ուր նա չեր կամե-
նում վոչ ուտել, վոչ խմել և հազիվ եր բացում աչքերը: Նրա գերության ընկերակիցները, վոր մի ժամանակ նրա գերիներն էին, Թամանգոյի հայտնվելն իրենց մեջ ընդու-
նեցին բուժ գարմանքով: Այն սարսափը, վոր նա դեռևս ներշնչում եր նրանց, այնքան մեծ եր, վոր վոչ վոր չեր համարձակվում դժբախտության մեջ նրան վիրավորել, ով իրենց սեփական գերության պատճառն եր:

Յամաքից փչող բարեհաշող քամուց քշվելով՝ նափս արագությամբ հեռանում եր Աֆրիկայի ափերից: Չանհանգստանալով այլևս անգլիական հաճանավի կողմից՝ նա-
վապետը մտածում եր այժմ այն ահագին ոգուտների մասին, վորոնք սպասում էին նրան գաղութներում, վո-
րոնց ճանապարհն եր բռնել նա: Նրա «սև փայտը» պահ-
պանվում եր անփնտ: Նավի վրա վառակիչ հիվանդու-
թյուններ չկային: Միայն տասներկու նեգրեր մեռան տո-
թից: Դատարկ բան ե: Վորպեսզի մարդկային բեռը վոր-
քան կարելի յե քիչ տառապի ճանապարհորդության
դժվարություններից, նա հրամայեց ամեն ուր հանել
ստրուկներին վերին տախտակամածի վրա: Հերթով այդ
դժբախտների մի յերրորդին տալիս էին մի ժամ, վոր
նրանք ամբողջ օրվա համար ողի պաշար հավաքեն: Նա-
վակազմի մի մասը, վորից մինչև գլուխ գինված, պահակ
եր կանգնած, յերկյուղ կրելով խոռովությունից: Բացի
դրանից, ստրուկների վրայից վոչ մի ժամանակ ամբող-

ջությամբ չէին հանում կապանքները: Յերբեմն նավաս-
տիներից վորևե մեկը, վոր գիտեր ջութակ նավազել, հա-
մերգ եր սարքում նրանց համար: Հետաքրքիր եր տեսնել,
թե ինչպես բոլոր սև մարմինները շուռ էին գալիս յե-
րաժշտի կողմը—նրանց դեմքերը հետզհետե կորցնում
էին բուժ հուսահատության արտահայտությունը, նրանք
սկսում էին բարձրաձայն ծիծաղել և ծափ տալ վորքան
վոր թույլ էին տալիս նրանց շղթաները: Մարմնամարգա-
վոր թույլ էին տալիս նրանց շղթաները: Մարմնամարգա-
կան վարժություններն անհրաժեշտ են առողջության հա-
մար, այդ պատճառով եր, իրագործելով ոգտակար նորմու-
թյուններից մեկը, վոր մտցրել եր նավապետ Լեգուն,
ստրուկներին հաճախ ստիպում էին պարել, ինչպես ճիւղն
ստիպում են վազք կատարել մի տեղում՝ նավի վրա յեր-
կար ճանապարհորդության ժամանակ:

— Դե, զավակներս, պարեցեք, ուրախացեք, — ասում
եր նավապետը վորոտացող ձայնով, շխկացնելով ահագին
մտրակը:

Յեվ խեղճ նեգրերը ցատկոտում էին ու պարում:
Միառժամանակ Թամանգոյի վերքը պահում եր նրան
ներքևում: Վերջապես հայտնվեց նա տախտակամածի վրա՝
ստրուկների յերկյուղած ամբոխի մեջ և, հպարտ, գլուխը
բարձր բռնած, մի տխուր, բայց հանգիստ հայացք ձգեց
ջրի անսահման տարածության վրա, վոր շրջապատել եր
նավը, հետո պառկեց, կամ, ավելի ճիշտ՝ ընկավ տախտա-
կամածի վրա, առանց նույնիսկ հոգ տանելու, վոր ուղղի
շղթան և հարմար լինի իր համար: Լեգուն, վոր նստած եր
հետնամածի վրա, հանգիստ չիբուխ եր ծխում: Նրա մոտ
եր Այշեն, առանց կապանքների, հագած յերկնագույն ջրեղ
զգեստ, վոտներին կարմիր սաֆյանե մուճակներ, նա ձեռ-
քին բռնել եր խմիչքներով լի մատուցարանը, պատրաստ
ածելու առաջին իսկ հրամանով: Պարզ եր, վոր նա պատ-
վավոր պարտականություններ եր կատարում նավապետի

մոտ: Մի նեղքը, վոր ատում եր Թամանգոյին, նշան արեց նրան, վոր այն կողմը նայի: Թամանգոն շրջեց գլուխը, տեսավ Այշեյին, արձակեց մի ճիչ և, միանգամից վոտքի թռչելով, վազեց դեպի հետնամածն ավելի շուտ, քան հսկող նավաստիները կկարողանային խանգարել նավային կարգապահության այգալիսի սոսկալի խախտումը:

— Այշե, — գոչեց նա անեղ ձայնով, և Այշեն արձակեց սարսափի ճիչ: — Դու կարծում ես, վոր սպիտակների յերկրում չկա Մամա-Ջումբոն:

Նավաստիներն արդեն վազում էին փայտերը բարձրացրած, բայց Թամանգոն ձեռքերը խաչած, կարծես անտարբեր, հանգիստ վերադարձավ իր տեղն այն ժամանակ, յերբ Այշեն աղի արցունք թափելով, կարծես քարացել եր այդ խորհրդավոր խոսքերից:

Թարգմանը բացատրեց, թե ով եր այդ սարսափելի Մամա-Ջումբոն, վորի միացն անունն այգալիսի սոսկում եր առաջացնում:

— Դա նեղրական հրեշ ե, — ասաց նա: — Յերբ ամուսինը վախենում ե, վոր նրա կինը չանի այն, ինչ վոր անում են շատ կանայք Փրանսիայում և Աֆրիկայում, նա սպառնում ե նրան Մամա-Ջումբոյով: Յես հո տեսել եմ Մամա-Ջումբոյին և հասկացել եմ, թե ինչպես են սարքում այդ, բայց սեամորթները... նրանք հիմար են, վոչինչ չեն հասկանում: Յերևակայեցեք. յերեկոյն, կանայք զվարճանում են պարերով, կազմում են ֆուգար, ինչպես իրենք են ասում իրենց լեզվով, և հանկարծ փոքրիկ և շատ խիտ ու մութ անտառից լսվում ե տարորինակ յերաժշտություն, ըստ վորում չի յերեվում, թե ովքեր են յերաժիշտները. նրանք բոլորն ել թագնված են անտառում: Նվազում են յեղեգնյա ֆլեյտաներ, փայտե թմբուկներ, «բալաֆոնների» և կիթառների վրա, վորոնք շինված են դուռնների կիսից: Ստացվում ե մի այնպիսի յերաժշտություն, վոր նրանով

կարելի յե թաղել սատանային անգամ: Հենց վոր կանայք լսում են այդ նվագածությունը, սկսում են դողալ, փորձում են փախչել, վորովհետև գիտեն, վոր իրենց խիղճը մաքուր չե, — բայց ամուսինները պահում են նրանց, չեն թողնում, վոր փախչեն: Հանկարծ անտառից դուրս ե գալիս մի մեծ, սպիտակ կերպարանք, բարձր, ինչպես մեր լիս մի մեծ, սպիտակ կերպարանք, բարձր, ինչպես մեր կրյուստինգան¹⁾, գլուխը՝ չանի նման, աչքերը՝ լապտերների չափ և անագին, կրակ արձակող ուխով, ինչպես սատանայինն ե: Այդ ամենը շարժվում ե դանդաղ-դանդաղ և անտառից չի հեռանում կես կաբելոտից²⁾ ավելի: Կանայք գոչում են. «գալիս ե Մամա-Ջումբոն»: Նրանք գոռում են վոստրե ծախող կանանց նման: Այն ժամանակ ամուսիններն ասում են նրանց. «դե, անպիտաններ, խոստովանեցեք, հավատարիմ եք յեղել: Յեթե սուտ ասեք, Մամա-Ջումբոն այստեղ ե, կենդանի կուլ կտա ձեզ»: Գտնվում են այն ժամանակ այնպիսի պարզամիտներ, վորոնք խոստովանում են իրենց հանցանքը, և ամուսինները ձեռնում են նրանց անողորմ կերպով:

— Իսկ ով ե այդ սպիտակ կերպարանքը, այդ Մամա-Ջումբոն, — հարցրեց նավապետը:

— Դա ծաղրածու յե, սպիտակ սավանի մեջ փաթաթված, վոր գլխից վերև տանում ե փոս գցած դուռնը՝ փայտին անցկացրած, իսկ մեջը վառ մոմ դրած: Դա շատ փայտին անցկացրած, իսկ մեջը վառ մոմ դրած: Դա շատ ել խորամանկ բան չե, բայց սեամորթներին խաբելու համար մեծ հնարագիտություն պետք չե: Ինչ ուզում եք ասեք, այդ Մամա-Ջումբոն շատ լավ հնարք ե, և յես կըցանկանայի, վոր իմ կինս հավատար նրան:

— Ինչ վերաբերում ե իմ կնոջը, — ասաց Լեդուն, — յեթե նա չի հավատում Մամա-Ջումբոյին, ապա վախենում ե Մարակ-Մարտինից. վերջիվերջո նա գիտե, վոր յես

1) Կրյուստինգա — յեռակայմ նավի հետևի կայմի վերին մասն ե:

2) Կաբելոտ — ծովային յերկարության չափ ե, հավասար ե 180 մետրի:

նրա հախից կգամ, յեթե վորևե հանցանք կատարի: Մենք, Լեզուներս, առանձին համբերության տեր չենք: Թեև յես միայն մի բռունցք ունեմ, բայց այդ բռունցքը դեռ շատ լավ բռնում ե մտրակը: Ինչ վերաբերում ե ձեր կտրձին, վորը խոսում ե Մամա-Ջումբոյի մասին, ասացեք նրան, վոր իրեն լավ պահի և չվախեցնի այս ջահել կնոջը, թե չե կհրամայեմ այնպես քորել նրա մեջքը, վոր նրա կաշին սևից կդառնա կարմիր, ինչպես հում ոտստբիֆը:

Ասելով այդ՝ նավապետն իջավ իր խուցը, հրամայեց ուղարկել այնտեղ Այշեյին և աշխատեց մխիթարել նրան: Բայց վոչ փաղաքշանքները, վոչ նույնիսկ հարվածները, — վորովհետև վերջիվերջո հո կարելի՞ յե կորցնել համբերությունը, — չկարողացան հանգստացնել գեղեցիկ նեզրուհուն. արտասուքի հեղեղը հոսում եր նրա աչքերից: Նավապետը նորից բարձրացավ կամրջակը վատ տրամադրության մեջ և կպավ հերթապահի ոձիքից, վորն այդ ժամանակ մի ինչ-վոր մանյովը եր կատարում:

Գիշերը, յերբ ամբողջ նավակազմը խոր քնի մեջն եր, պահապան նավաստիները լսեցին սկզբում լուրջ, հանդիսավոր, մռայլ յերգ, վորը գալիս եր ներքեվի տախտակամածից, հետո կանացի մի սոսկալի, սուր ճիչ: Անմիջապես ամբողջ նավի վրա հնչեց Լեզուի կոպիտ ձայնը, վոր արձակում եր անեծքներ ու սպառնալիքներ, և լավեց նրա սոսկալի մտրակի շրխկոցը: Մի ըուպեյից հետո ամեն ինչ խորասուզվեց լուռության մեջ: Հետեվյալ որը Թամանգոն հայտնվեց տախտակամածի վրա՝ մտրակի հարվածների շերտերով ծածկված դեմքով, բայց նույնպես հպարտ և վճռական արտահայտությամբ, ինչպես առաջ:

Հենց վոր Այշեն նկատեց նրան, իսկույն, թողնելով հետնամածը, վորտեղ նա նստած եր նավապետի կողքին, արագ վազեց Թամանգոյի մոտ, ծունկ չոքեց նրա առաջ և ասաց խոր հուսահատական արտահայտությամբ.

— Ներիր ինձ, Թամանգո, ներիր ինձ:

Թամանգոն մի ըուպեյի չափ նալեց նրան հառած աչքերով, հետո, նկատելով, վոր Թարգմանը հեռու յե, ասաց.

— Խարտոց, — և պառկեց տախտակամածի վրա, մեջքը դարձնելով Այշեյին:

Նավապետը խիստ հանդիմանեց Այշեյին, մինչև անգամ մի քանի ապտակ տվեց և արգելեց խոսել իր նախկին ամուսնու հետ, բայց նա գլխի չընկավ հարցնելու ահն մի քանի համառոտ խոսքերի իմաստի մասին, վոր փոխանակեցին նրանք իրար հետ և վոչ մի հարց չտվեց նրան:

Այնինչ Թամանգոն, վոր փակված եր մյուս ստրուկներին հետ, գիշեր ու ցերեկ համոզում եր նրանց՝ վճռական ջանք գործ դնել ազատություն ձեռք բերելու համար: Նա խոսում եր նրանց հետ սպիտակների փոքր քանակի մասին, և նրանց ուշադրությունն եր դարձնում պահակների հետզհետե մեծացող անհոգության վրա: Հետո, առանց մանրամասնություններին դառնալու, սկսեց խոսել, վոր գիտե, թե ինչպես կարելի յե վերադարձնել նրանց հայրենիք, պարծենում եր, վոր գիտե գաղտնի գիտություններ, վորոնք շատ հարգի յեն նեզրերի մեջ և սպառնում եր սաստանայի վրիժառությամբ նրանց, վորոնք կհրաժարվեն ոգնելու նրան իր դիտավորության մեջ: Խոսելիս նա գործ եր ածում մի բարբառ, վորը հասկանում եր ստրուկների մեծ մասը, բայց վորը չեր հասկանում Թարգմանը: Ճառախոսի հեղինակությունը և Թամանգոյից վախենալու, նրան լսելու ստրուկների սովորությունը զարմանալի կերպով ոգնեցին նրա պերճախոսությանը, և մանալի կերպով ոգնեցին նրա պերճախոսությանը, և նեզրերն սկսեցին համոզել նրան, վոր նրանց ազատության որը նշանակի նույնիսկ ավելի շուտ, քան ինքն եր համարում հնարավոր՝ գլուխ բերելու համար: Նա դավադիրներին անորոշ պատասխան տվեց թե ժամանակը դեռ չի յեկել, և վոր սատանան, վորը յերևացել ե նրան յե-

Նեղերն աշխատել ելին այնչափ սղոցել շղթաները, վոր այդ նկատելի չլինեք, բայց վոր կարելի լինեք մի փոքր ջանք գործ դնելով կտարեք այն: Բացի այդ, նրանք այնպես բարձր ելին աղմկում իրենց շղթաներով, վոր լսելիս կարելի չեր ասել, թե նրանք կրկնակի ծանրություն են կրում: Ինչ թարմ ու ծծելուց հետո նրանք բռնեցին բոլորն իրարու ձեռքերից և սկսեցին պարել, իսկ այդ ժամանակ թամանգոն յերգեց իր ցեղի¹⁾ ռազմական յերգը, վորը նա մի ժամանակ յերգում եր կովի գնալուց առաջ: Պարը շարունակվեց միառժամանակ ևս, և թամանգոն, վորպես թե հոգնածությունից ուժասպառ, իր ամբողջ հասակով ձգվեց մի նավաստու վոտների մոտ, վորն անհոգ կերպով հենված եր շկափուտին: Բոլոր դավադիրներն ել նույնն արին: Այսպիսով յուրաքանչյուր պահակ շրջապատվեց մի քանի նեղերով:

Հանկարծ թամանգոն, վոր նոր եր կամացուկ կտրտել իր կապանքները, արձակեց մի բարձր ձի, վորը պետք ե ծառայեր վորպես ազդանշան, արագ թափով բռնեց մոտիկ կանգնած նավաստու վոտից, վայր գլորեց նրան և, վտար դնելով նրա փորի վրա, խլեց նրա հրացանը, վորով և սպանեց հերթապահ սպային: Միառժամանակ մնացած բոլոր պահակներն ել բռնվեցին, գինաթափ արվեցին և իսկույն սպանվեցին: Ամեն կողմից լսվում եր ռազմական կոչ: Նավապետի ոգնականը, վորի մոտն եր գտնվում շղթաների բանալին, առաջին սպանվածների մեջն եր: Այն ժամանակ նեղերի բազմությունը հեղեղեց ամբողջ տախտակամածը: Նրանք, վորոնք զենք չեյին ձգում, ճանկում եյին կարեստանի յերկաթե անվաճաղերը և մակույկների թիերը: Այժմ յեվրոպական նավակազմը կորած եր: Միայն մի քանի նավաստիներ դեռևս դիմադրում եյին հետնամածի վրա, բայց նրանք վոչ զենք ունեյին և վոչ ել վճռականություն:

1) Յուրաքանչյուր նեղական առաջնորդ ունի իր յերգը:

Ղեղուն դեռևս կենդանի չեր և չեր կորցրել իր արիությունը: Նկատելով, վոր թամանգոն ե հանդիսանում դավադրության գլխավորը՝ նա մտածեց, վոր յեթե հաջողվի նրան սպանել, մյուսներին հեշտ կլինի սանձահարելը: Յեվ նա հարձակվեց նրա վրա թուրը ձեռքին, բարձրաձայն գոռալով: Թամանգոն անմիջապես նետվեց նրա կողմը: Նա բռնել եր հրացանի փողի ծայրից և գործ եր ածում այն վորպես ճաղ: Նրանք հանդիպեցին շկափուտի մոտ, մի նեղ անցքում, վորը միացնում եր հետնամածը ջրարկղին: Առաջինը թամանգոն հարված հասցրեց: Մի թեթև շարժումով սպիտակը խույս տվեց հարվածից: Հրացանի կոթն ուժեղ կաշելով հատակին կտրվեց, և հարվածն այնքան ուժեղ եր, վոր հրացանը դուրս պրծավ թամանգոյի ձեռքից: Այժմ նա անպաշտպան եր, և Ղեղուն դիվական ժպիտով բարձրացրեց ձեռքը, վոր խոցի: Բայց թամանգոն ճարպիկ եր իր հայրենիքի հովազի պես: Նա նետվեց իր թշամու գիրկը և բռնեց նրա ձեռքը, վորով նա բռնել եր թուրը: Մեկն աշխատում եր պահել զենքը, իսկ մյուսն աշխատում եր խել այն: Կատաղի կովի մեջ նրանք վայր ընկան, բայց ափրիկացին ընկավ տակը: Այն ժամանակ, չկորցնելով իր արիությունը, թամանգոն ամբողջ ուշժով սեղմեց հակառակորդին, առամները խրեց նրա կողորդի մեջ մի այնպիսի կատաղությամբ, վոր արյունը դուրս ժայթքեց վորպես առյուծի ժանիքների տակից: Թուրը վայր ընկավ ուժասպառ յեղած նավապետի ձեռքից: Թամանգոն վերցրեց այն, հետո, վտարի կանգնելով, արյունակալած բերանով, հաղթական բացականչություններ արձակելով, նա մի քանի հարված հասցրեց կիսակենդան թշնամուն:

Այլևս հաղթությունը կասկածից դուրս եր: Կենդանի մնացած մի քանի նավաստիներ, փորձեցին փրկություն աղերսել ապստամբներից, բայց բոլորն ել, մինչև թարգմանը, վորը յերբեք վատություն չեր արել նեղերին, անխնա


կերպով սպանվեցին: Լեյտենանտը մեռավ պատվով: Նա թագնվել էր նավախելում, փոքրիկ թնդանոթներից մեկի հետևը, վորոնք պտտվում են առանցքի վրա և լցվում են կարտեչով: Չախ ձեռքով նա նշան էր դնում թնդանոթը, իսկ աջով, վորով բռնել էր թուրը, պաշտպանվում էր այնքան հաջող, վոր իր կողմը գրավեց սևամորթների մի խումբ: Այն ժամանակ, արձակելով թնդանոթը, նա բացեց այդ հոծ մասսայի մեջ լայն ճանապարհ, վորը ծածկված էր մեռածներից և մեռնողներով: Մի րոպե անց՝ նրան պատահապատահ արին:

Յերբ վերջին սպիտակամորթի մանրած ու կտրտած դիակը նետեցին ծովը, նեղերը, վրեժխնդրությունից հագեցած, աչքերը բարձրացրին քամուց ուռած առաքաստների վրա, վորոնք, կարծես, դեռևս հպատակվում էին ճնշողներին, և հաղթողներին—չնայած նրանց հաղթությունը—տանում էին ստրուկների լերկերը:

«Վոչինչ դուրս չեկավ,—մտածեցին նրանք վշտացած:—Միթե սպիտակների այս մեծ ֆետիշը կցանկանա տանել մեզ հալըենիք, մեզ, վոր թափել ենք նրա տերերի արյունը»:

Մի քանի հոգի հայտնեցին, վոր Թամանգոն կարող է ստիպել նրան իրեն հպատակվելու: Իսկույն բոլորն սկսեցին կանչել Թամանգոյին բարձրաձայն աղաղակներով: Նա չէր շտապում լերեալ: Նրան գտան նավախելի խցիկում: Նա կանգնած էր մի ձեռքով հենված նավապետի արյունաշաղախ թրին, իսկ մյուս ձեռքը մտամոլոր դեմքով մեկնել էր իր կնոջը՝ Ալշեյին, վորը ծունկ չոքած նրա առաջ, համբուրում էր այդ ձեռքը: Տարած հաղթության ուրախությունը չէր նվազեցնում այն մռայլ անհանգստությունը, վորը լերեռում էր նրա ամբողջ արտաքինից: Լինելով մյուսներից պակաս տգետ՝ նա ավելի լավ էր հասկանում դրությունը գլխարկությունը:

Վերջապես նա հայտնվեց տախտակամածի վրա դեմքի հանգիստ արտահայտությամբ, վոր չէր համապատաս-



Լեյտեն սուրը ձեռքին հարձակվեց Թամանգոյի վրա

խանութ նրա տրամադրութեանը: Հարցուելով իրար ձուլված ձայներ նրան հարկադրում եյին ուղղել ղեկի ընթացքը, իսկ նա կարծես ուզում էր մի քիչ հեռացնել այն ըուպեն, վորը պետք է վորոշեր նրա իշխանութեան ուլթը թե իր և թե ուրիշների համար:

Նավի վրա չկար մի աջնալիսի տխմար նեղր, վորը նկատած չլիներ մի ինչ-վոր անիվի և նրա դիմաց գտնվող արկղիկի ազդեցութեանը նավի շարժման վրա: Բայց այդ մեխանիզմի մեջ աշտուղներն այնքան ծածկված էր մի մեծ գաղտնիք: Թամանգոն բավական յերկար ուսումնասիրում էր կողմնացույցը՝ շրթունքները շարժելով, կարծես կարգում էր նրա վրայի տառերը, հետո նա մոտեցրեց ձեռքը ճակատին և մտախոհ մարդու գեմք ընդունեց, վորն իր մտքում ինչ վոր հաշիվներ է անում: Բոլոր նեղրերը շրջապատել եյին նրան բերանաբաց և լայն չռած աչքերով, անհանգստութեամբ հետևելով նրա ամենափոքրիկ շարժմանը: Վերջապես յերկուրդի և ինքնավստահութեան այն խառնուրդով, վոր տալիս է տղիտութեանը, նա ուժեղ կերպով շուռ տվեց ղեկի անիվը:

Վորպես ագնիվ ձի, վոր ծառս է լինում անզգուշ ձիավորի խթանների հարվածներից, գեղեցիկ «Շապերանսը» ցատկեց ալիքների վրա այդ չլսված մանյովրից: Կարծես նա բարկացած ուզում էր խեղդել իր տգետ ղեկավարի հետ միասին: Անհրաժեշտ համերաշխութեանն առաջադրողների դրութեան և ղեկի մեջ կտրուկ կերպով խախտված էր, և նավը թեքվեց մի այնպիսի ուլթով, վոր կարծես պատրաստ էր շուռ գալու: Նրա յերկար առաջադառնալներն ընկղմվեցին ծովի մեջ: Մի քանի հոգի վայր ընկան տախտակամածի վրա, ուրիշներն ընկան ծովի մեջ: Շուտով նավը հպարտորեն ուղղվեց ալիքի գագաթի վրա, կարծես ցանկանալով կրկին անգամ պայքարել քայքայման դեմ: Քամին ուժեղացավ և հանկարծ սոսկալի աղմուկով ընկան

յերկու կայմեր, վորոնք ծածկեցին տախտակամածը փայտե կտորներով և պարանասարքի ծանր ցանցով:

Սարսափած նեղրերը սոսկալի աղաղակներով ներքև փախան, բայց վորովհետև քամին այլևս դիմադրութեան չէր հանդիպում, նախ ուղղվեց և սկսեց հանդարտ որորվել ալիքների վրա: Այն ժամանակ նեղրերից ալիքի քաշերը բարձրացան վերևի տախտակամածը և մաքրեցին փայտի կտորտանքներից, վորոնցով ծածկված էր նա: Թամանգոն մնացել էր անշարժ, հենված կողմնացույցին և յերեսն արմունկով ծածկած: Այլեհ նրա մոտ էր, բայց չէր համարձակվում հարց տալ նրան: Կամաց-կամաց նեղրերը մոտեցան և բարձրացավ տրտունջ, վորը շուտով փոխվեց կշտամբանքների և անեծքների փոթորկի:

—Դավաճան, խաբեբա, — գոռում եյին նրանք: — Այդ դու բերիւր մեզ բոլոր դժբախտութեանները, դու ծախեցիւր մեզ սպիտակամորթներին, դու մեզ դրդեցիւր ապստամբել նրանց դեմ: Դու պարծենում եյիր մեր առաջ, թե ամեն բան դիտես, դու խոստացար տանել մեզ հայրենիք: Մենք քեզ հավատացինք, հիմարներս, և ահա քիչ էր մնացել, վոր բոլորս ել կորչեյինք, վորովհետև դու վիրավորել ես սպիտակների ֆետիշին:

Թամանգոն հպարտութեամբ բարձրացրեց գլուխը, և նրան շրջապատած բոլոր սևամորթները վախեցած հետ քաշվեցին: Նա ընտրեց յերկու հրացան, նշան արավ կնոջը, վոր հետևի իրեն, անցավ ամբոխի միջով, վորը տեղի տվեց նրա առաջ և ուղղվեց դեպի նավացուկը: Այնտեղ նա շրջապատեց իրեն զատարկ տակառներից և տախտակներից շինած պատնեշով, հետո նստեց այդ ամբոցի մեջտեղը, վորտեղից սպառնալից ցցվել եյին նրա յերկու հրացանների սվինները: Նրան հանգիստ թողին: Ապստամբներից վոմանք լաց եյին լինում, վոմանք ձեռքերը յերկինք բարձրացրած, կանչում եյին իրենց և սպիտակների աստվածներին, մյուսները

ծունկ չորքած կողմնացուցի առաջ, վորի անընդհատ շար-
ժումը զարմացնում էր նրանց, աղաչում էյին նրան, վոր
իրենց տուն տանի: Մի քանիսն էլ ուղղակի պառկել էյին
տախտակամածի վրա, մոայլ, վհատության մեջ ընկած:
Պատկերացրեք այդ հուսահատված մարդկանց մեջ նաև
կանանց և յերեխաներին, վորոնք վրոնում էյին յերկյուղից,
և մի-յերկու տասնյակ վիրավորներին, վորոնք ոգնություն
էյին աղերսում, վոր վոչ վոք չեր էլ մտածում ցույց տալ
նրանց:

Հանկարծ մի նեգր յերևաց տախտակամածի վրա. նրա
դեմքը փայլում էր: Նա հայտնեց, վոր գտել է այն տեղը,
վորտեղ սպիտակները պահում էյին ողին: Նրա ուրախու-
թյունն ու վարքը բավականաչափ ապացուցում էյին, վոր
նա արդեն ճաշակել է ողին: Այդ նորությունը մի վալը-
կյան կանգնեցրեց խեղճերի աղաղակները: Նրանք նեո-
վեցին կամբուղ¹⁾ և ամենքն էլ հարբեցին: Մի ժամ ան-
ցած կարելի չեր տեսնել, թե ինչպես էյին նրանք հրհուռ-
կա ցատկոտում տախտակամածի վրա, անձնատուր յեղած
այդ անասնական հարբեցության բոլոր գծություններին:
Նրանց պարերին և յերգերին միանում էյին վիրավորների
հառաչանքներն ու լացը: Այդպես անցան որվա վերջը և
ամբողջ գիշերը:

Առավոտյան զարթնելուց հետո նոր հուսահատու-
թյուն: Գիշերվա ընթացքում վիրավորվածների նշանավոր
մասը մեռել էր: Նավը լողում էր շրջապատված դիակնե-
րով: Ծովն ալեկոծվում էր և յերկինքն ամպամած էր:
Սկսեցին խորհուրդ անել: Վոմանք, վոր առաջ էլ մի բան
հասկանում էյին կախարդանքից և թամանգոյի մոտ չէյին
համարձակվում հայտնել իրենց գիտության մասին, այժմ
իրար հետեից առաջարկում էյին իրենց ծառայություն-
ները: Փորձեցին մի քանի ամենագորեղ դյուրումներ: Յու-

րաքանչուր անոգուտ փորձից հետո հուսահատությունը
սաստկանում էր: Վերջապես վճռեցին նորից դիմել թա-
մանգոյին, վորը դուրս չեր գալիս իր թագաւոյան տեղից:
Ինչ էլ վոր լիներ, թամանգոն ամենից իմաստունն էր
նրանց մեջ և միայն նա կարող էր դուրս բերել նրանց այն
սարսափելի դրությունից, վորի մեջ նա ինքն էր գցել
նրանց:

Մի ծերունի մոտեցավ նրան և առաջարկեց հաշտու-
թյուն: Նա խնդրեց նրանից դուրս գալ և խորհուրդ տալ,
բայց թամանգոն անդրդվելի, վորպես Կորիովան¹⁾, խուլ էր
նրանց խնդիրների դիմաց: Գիշերն իրարանցման ժամանակ
նա տեսել էր պաքոթմատի և աղած մսի պաշար, կարծես
նա վճռել էր ապրել մենակ իր պատսպարանում:

Ողի դեռևս կար: Նա գոնե ստիպում էր մոռանալ
և՛ ծովը, և՛ ստրկությունը, և՛ մոտակա մահը: Կարե-
լի յեր քնել և տեսնել յերազում Աֆրիկան, կառնուկի
անտառները, ծղոտով ծածկած հյուղակները և բառբաբի²⁾
ծառերը, վորոնց ստվերի տակ պատսպարվում են ամբողջ
գյուղեր: Յերեկվա հարբեցողությունը վերսկսվեց:

Այսպես անցավ մի քանի օր: Նեգրերը վողբում էյին,
լաց լինում, փետում էյին իրենց մազերը, հետո հարբում
և քնում,—այդ էր նրանց կյանքը: Շատերը մեռան հարբե-
ցողությունից, մի քանիսն իրենց նետեցին ծովը կամ
ինքնասպանություն գործեցին:

Մի անգամ առավոտյան թամանգոն դուրս յեկավ իր
ամրոցից և մոտեցավ գլխավոր կայմի բեկորին:

— Ստրուկներ, — ասաց նա, — վոգին հայտնվել է ինձ
յերազում և բացել է ձեզ աղատելու և հայրենիք տանելու
միջոցը: Ձեր ապերախտությամբ դուք արժանի չեք, վոր
յես ձեզ ձգեմ, բայց յես խղճում եմ կանանց և յերեխաներին,

1) Կորիովան — Շեքսպիրի համանուն վողբողության հերոսը:

2) Բառբաբ — ամենայնեպարակյաց ծառերից մեկը, վոր բուսնում է Աֆրի-
կայում և հայտնի չէ իր հսկայական չափերով:

1) Կամբուղ — նավի խոհանոց:

վորոնք լաց են լինում: Յես ձեզ ներում եմ: Լսեցեք ինձ:—Բոլոր սեամորթները հարգանքով խոնարհեցին գլուխները և խմբվեցին նրա շուրջը:

—Միայն սարուկները գիտեն,—շարունակեց Թամանգոն,—գորեղ խոսքեր, վորոնք կարող են ստիպել շարժվելու այս անագին փայտյա տները, բայց մենք մեր կամքով կարող ենք վարել թեթև նավակներ, վորոնք նման են մեր հայրենիքի մակուկներին:

Նա ցույց տվեց մակուկը և այլ փրկանավակները:

—Լցնենք նրանց մեջ ուտեստի պաշարներ, նստենք նրանց վրա և քշենք քամու ուղղությամբ. իմ և ձեր աստվածը կստիպե քամուն փչելու մեր հայրենիքի կողմը:

Նրան հավատացին: Դեռևս ավելի խելացնոր ծրագիր չեր ծագել: Չկարողանալով ոգտվել կողմնացույցից, անձանոթ յերկնքի տակ, Թամանգոն կարող եր լողալ միմիայն հաջողության վրա հույս դրած: Նա յերևակայում եր, վոր յեթե լողան ամբողջ ժամանակ ուղիղ, վերջիվերջո նրանք կհանդիպեն մի վորեւ յերկրի, վորի բնակիչները սեամորթներն են, վորովհետև սեամորթները տիրում են հողին, իսկ սպիտակներն ապրում են իրենց նավերում: Այդ լսել եր նա իր մորից:

Շուտով ամեն ինչ պատրաստ եր ճանապարհ ընկնելու համար, բայց միայն մի մակույկ և մի նավակ ընդունակ էյին գործին ծառայելու: Դա չափազանց քիչ եր կենդանի մնացած ութսուն նեզերի համար: Հարկադրված էյին թողնել բոլոր վիրավորվածներին և հիվանդներին: Մեծ մասը խնդրում եր, վոր իրենց սպանեն ճակատագրի կմաքին թողնելուց առաջ:

Չափազանց բեռնավորված և անսահման դժվարություններով ծովն իջեցրած յերկու նավակը հեռացան նավից ալեկոծ ծովի վրայով, վորն ամեն բոլե սպառնում եր կուտալ նրանց: Մակույկը հեռացավ առաջին հերթին: Թաման-

գոն և Այշեն նստած էյին նավակում, վորն ավելի ծանր եր և ավելի շատ եր բեռնավորված, ուստի և խիստ հետ եր մնում: Դեռևս լավում էյին նավում թողած մի քանի դժբախտներ յաղիողորմ աղաղակները, յերբ բավական ուժեղ մի ալիք զարկվեց նավակի կողքին և կիսով չափ ջրով լցրեց: Մի բոլե չտեվեց, վոր նա ընկղմվեց ծովի մեջ: Մակույկից տեսան աղետը և թիավարները կրկնապատկեցին իրենց ջանքերը վախենալով, վոր ստիպված կլինեն խեղդվողներից մի քանիսին վերցնել իրենց մոտ:

Նավակի մեջ նստածները համարյա բոլորն ել խեղդվեցին: Միայն մի տասն հոգու հաջողվեց վերադառնալ նավը, վորոնց թվումն էյին Թամանգոն և Այշեն: Յերբ արևն իջավ, նրանք տեսան, թե ինչպես մակույկն անարևն իջավ հորիզոնի հեռուում: Բայց ինչ յեղան նրանք, վոչ վոք չգիտե:

Ինչո՞ւ հողնեցնեմ ընթերցողին քաղցի պատճառած տառապանքների զգվելի նկարագրությամբ: Մոտ քսան հոգի մի նեղ տարածության վրա, վորոնց կամ փոթորկալից ծովն եր որորում և կամ արևը խանձում, ամեն որ կովում էյին իրար հետ մթերքների աղքատիկ մնացորդների համար: Պաքսիմատի յուրաքանչյուր կտորը ձեռք եր բերվում կովով և թույլը մեռնում եր վոչ թե այն պատճառով, վոր ուժեղն սպանում եր նրան, այլ այն պատճառով, վոր ուժեղը թողնում եր նրան մեռնելու: Մի քանի որից հետո «Եսպերանս» նավի վրա կենդանի մնացին միայն Թամանգոն և Այշեն:

Մի անգամ գիշերը ծովն ալեկոծված եր, քամին սարսափելի մոնչում եր և այնքան մութն եր, վոր ղեկից չեր յերևում նավի ցուռկը: Այշեն պառկած եր նավապետի խցում ներքնակի վրա, իսկ Թամանգոն նստած եր նրա վոտների մոտ: Յերկուսն ել վաղուց արդեն լուռ էյին:

— Թամանգոն, — գոչեց, վերջապես, Այշեն: — Այդ ամբողջ տանջանքը վոր դու քաշում ես, իմ պատճառով ես քաշում...


— Յես վոչինչ չեմ քաշում, — պատասխանեց նա կտրուկ կերպով և կնոջ կողմը՝ ներքնակի վրա ձգեց պաքսիմատի կեսը, վոր դեռ մնացել էլ նրա մոտ:

— Պահիր քեզ համար, — տաաց Այշեն, կամաց հեռացնելով պաքսիմատը, — յես այլևս չեմ ուզում ուտել: Բացի այդ, ի՞նչ կարիք կա ուտելու: Միթե իմ վերջը չի հասել:

Թամանգոն բարձրացավ, առանց պատասխանելու, որորվելով դուրս յեկավ տախտակամածի վրա և նստեց կտորրված կայմի վարի մասում: Գլուխը խոնարհելով կրծքին՝ նա սկսեց շվացնել իր ցեղի յերգը: Հանկարծ մի բարձր ճիչ լսվեց քամու և ծովի աղմկի միջից, հայտնվեց լույս: Նա լսեց նոր բացականչություններ և մի մեծ, սև նավ արագորեն անցավ նրա մոտից, այնքան մոտիկ, վոր առագաստակալներն անցան նրա գլխի վրայով: Նա տեսավ միայն յերկու կերպարանք, վորոնց լուսավորում եր կայմից կախած լապտերը: Այդ մարդիկ կրկին անգամ ճիչ արձակեցին, և իսկույն նավը, քամուց քշվելով, անհայտացավ խավարի մեջ: Կասկած չկար՝ այդ մարդիկ նկատել էյին աղետի յենթարկված նավը, բայց ուժեղ փոթորիկը խանգարել եր նրանց հետ դարձնելու նավը:

Մի բուպեյից հետո Թամանգոն կրակ տեսավ և լսեց թնդանոթի զարկը. հետո նա տեսավ մյուս զարկի կրակը, բայց արգեն վոչ մի ձայն չլսեց, այնուհետև վոչինչ չեր կարելի տեսնել: Հետևյալ որը վոչ մի առագաստ չերեաց հորիզոնի վրա: Թամանգոն նորից պառկեց ներքնակի վրա և փակեց աչքերը: Նրա կինը՝ Այշեն մեռել եր նույն գիշերը:

Չգիտեմ ինչքան ժամանակից հետո անգլիական «Բեյլոնա» ֆրեգատը տեսնում ե մի նավ առանց կայմերի, վորին, ըստ յերևույթին, թողել եր նավակազմը: Նրան մոտեցած մակույկը գտավ այնտեղ մի մեռած նեգրուհու և մի



Մակույկն ալեկոծ ծովով հեռացավ նավից

238
նեղրի, վորն այնքան նիհար եր և հյուժված, վորնմանուր
եր մուսիայի: Նա ուշաթափ եր, բայց կյանքի շունչը դեռ
ևս մարած չեր նրա մեջ: Բժիշկն զբաղվեց նրանով, շրջա-
պատեց նրան խնամքով և յերբ «Բելլոնան» հասավ Կինդ-
ստոն, Թամանգոն բոլորովին առողջ եր:

Նրան հարցրին դեպքի մասին: Նա պատմեց բոլորը,
ինչ վոր գիտեր: Կզգու ագարակատերերն ուզում էին,
վոր նրան կախեն վորպես ապստամբ նեղրի, բայց
նահանգապետը, վոր մարդասեր եր, հետաքրքրվեց նրանով,
վորովհետև համարեց, վոր նրա հանցանքն արժանի չե
արդարացման, քանի վոր նա վերջիվերջո ոգտվել է միայն
ինքնապաշտպանության իրավունքից և, բացի այդ, չէ՞ վոր
նրանք, վորոնց նա սպանել է, լուկ Ֆրանսացիներ էին:
Նրա հետ վարվեցին այնպես, ինչպես վարվում են այն
նեղրերի հետ, վորոնց վերցնում են խլած ճորտատար նա-
վերից: Նրան ազատություն տվին, այսինքն ստիպեցին
աշխատել կառավարության համար, բայց վճարում ելին
որական վեց սու¹⁾ և կերակրում էին: Դա բարձրահասակ
և գեղեցիկ տղամարդ եր: 75-րդ գնդի պետը տեսավ նրան
և վերջրեց վորպես ծնծղա զարկող իր գնդի նվազախմբի
մեջ: Նա մի քիչ հասկանում եր անգլիերեն լեզուն, բայց
խոսել չեր կարողանում: Դրա փոխարեն նա մեծ չափով
խմում եր ռոմ և շաքարի ողի: Նա մեռավ հիվանդանոցում
Թոքերի բորբոքումից:



1) Սու--Ֆրանսիական մանր դրամ՝ հավասար Ֆրանկի 1/20-ին

1873